ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՀՍԽՀ ՖԻՆԺՈՂԿՈՄԱՏԻ

# ՑԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ԳԱՆՁՈՒՄԸ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻՑ

Կազմեց՝ Ա. ՏԵՐ-ԻՍԱՀԱԿՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

1931

15 JAN 2010

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ. ՄԻԱՑԵ՛Ք

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՍԽՀ ՖԻՆԺՈՂԿՈՄԱՏԻ

336.2
Տ-40
Աբ
1792

# ՅԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ԳԱՆՁՈՒՄԸ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻՑ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ ՎԱՐՁՈՒ ԲԱՆՎՈՐՆԵՐ ՅԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԲՈԼՈՐ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կազմեց՝ Ա. Տեր-Իսահակյան

Гос. Публичная Библиотека ССРА им. А. Мясникяна
15708-52

1931

20 AUG 2013

27820

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ԳԼԱՎԼԻՏ 6779 (բ)
ՊԱՏՎԵՐ 4238
ՏԻՐԱԺ 2000

## ԿԱԶՄՈՂԻՑ

*Բանվորների և ծառայողների աշխատավարձի հարկման կարգի մասին հրատարակված և ֆինժողկոմատի կողմից հատուկ բրոշյուրա, դեռ 1929 թ., սակայն ի նկատի ունենալով մի շարք էական փոփոխությունները, վորոնք մտցված են հետագայում աշխատավարձի հարկման կարգի մեջ—հարկային որենսդրությամբ և նպատակ ունենալով ամփոփելու և պարզեցնելու հարկման տեխնիկան, ֆինժողկոմատը անհրաժեշտ է գտել հրատարակել այս ձեռնարկը։*

---

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Յեկամտային հարկի յենթարկվում են բոլոր այն բանվորները և ծառայողները (նույն թվում կառուցող, սեզոնային և ժամանակավոր բանվորները), վորոնք կատարում են վարձու աշխատանք պետական, կոոպերատիվ և հասարակական հիմնարկություններում և ձեռնարկություններում, ինչպես և մասնավոր ձեռնարկությունների բանվորները և ծառայողները: Յեկամտային հարկ գանձվում է այն ժամանակ, յերբ վարձու աշխատանքի համար տվյալ ամսում ստացած վարձատրությունը (յեկամուտը) գերազանցել է հետևյալ չափերից (մինիմումից)—

ա) 100 ռուբլուց 1-ի գոտուն պատկանող վայրերում (Հայաստանում այդ գոտուն պատկանող վայրեր չկան).

բ) 90 ռուբլուց 2-րդ գոտում (Յերևան և Լենինական քաղաքներ):

գ) 80 ռուբլուց-3-րդ գոտում (Վաղարշապատ, Ղարաքիլիսա, Դիլիջան, Նոր-Բայազետ, Գորիս և Ղամարլու).

դ) 75 ռուբլուց 4-րդ գոտում (մյուս շրջանային կենտրոնները և գյուղական բոլոր վայրերը).

**ՈՐԻՆԱԿ՝** բանվորը կամ ծառայողը հուլիս ամսում ստացել է աշխատավարձ 85 ռ.՝ Յերևան և Լենինական քաղաքներում այդ աշխատավարձը չի յենթարկվում հարկման, վորովհետև աշխատավարձը չի գերազանցում 2-րդ գոտու համար սահմանված մինիմումից (90 ռուբլուց): Յեթե բանվորը ստանար նույն 85 ռ. աշխատավարձը, Վաղարշապատում (3-րդ գոտի), նա պետք է յենթարկվեր հարկման, վորովհետև 85 ռ. աշխատավարձը այս դեպքում գերազանցում է տվյալ վայրի համար սահմանված, մինիմումից (80 ռուբլուց):

Հարկման այս կարգը տարածվում է նաև արհեստագործական կոոպերատիվ ընկերությունների (արտելների) այն անդամների վրա, վորոնք աշխատում են այդ ընկերությունների ընդհանուր

արհեստանոցներում, ինչպես և հաշմանդամական արտելների և միավորումների այն անդամների վրա, վորոնք ստանում են վարձատրություն աշխատավարձի հիմունքներով։

Յեկամտահարկը գանձում է անմիջականորեն աշխատավարձ վճարող (ռոճկացուցակներ կազմող) հիմնարկությունը, կամ ձեռնարկությունը, ամեն ամիս, տվյալ ամսվա 2-րդ մասի աշխատավարձը տալու ժամանակ։ Յեթե բանվորը կամ ծառայողը աշխատում է միաժամանակ մի քանի հիմնարկություններում (по совместительству), այդ դեպքում ամեն մի հիմնարկություն, կամ ձեռնարկություն պահում է յեկամտահարկը միայն իր գծով տված աշխատավարձի համեմատ—անկախ նրանից, վոր բանվորը, կամ ծառայողը, ստացել է վարձատրություն վորևէ այլ հիմնարկությունից։

Աշխատավարձի հարկման ժամանակ, բանվորների և ծառայողների կողմնակի աղբյուրների յեկամուտները (տնից, այգուց, մասնավոր պրակտիկայից, հիմնարկությունից դուրս կատարած գրական աշխատանքից և այլ աղբյուրներից) հաշվի չեն առնվում։

Այդ կողմնակի աղբյուրների յեկամուտներից հարկը գանձում է ֆինբաժինը, վորին բանվորները և ծառայողները ներկայացնում են հայտարարություն (դեկլարացիա) իրենց կողմնակի յեկամուտների մասին առանձին։

ՕՐԻՆԱԿ՝ ծառայողը Յերևանում աշխատում է յերկու հիմնարկություններում, վորից մեկում ստանում է ամսական աշխատավարձ 100 ռուբլի և մյուսից 150 ռուբլի։ Բացի դրանից նա ունի տուն, վորից ստանում է վարձ յեկամուտ (կողմնակի յեկամուտ). Հարկումը կատարվում է հետևյալ կարգով՝ առաջին հիմնարկությունը հաշվում է հարկը յելնելով—100 ռ. իսկ յերկրորդը—150 ռուբլուց։ Տնից ստացած յեկամուտը հաշվի չի առնվում, վորովհետև այդ յեկամուտը հարկի յե յենթարկում ֆինբաժինը։

Աշխատավարձից յեկամտահարկը ճիշտ հաշվելու և ժամանակին մուծելու պարտականությունը ընկնում է անձամբ աշխատավարձ վճարող հիմնարկության կամ ձեռնարկության ղեկավարի վրա։ Ֆինբաժինները այդ գործում ունենում են միայն ղեկավարություն և հսկողություն։

## ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Վորպեսզի վորոշել յենթակա յե արդյոք տվյալ անձնավորությունը յեկամտային հարկի թե վոչ, պետք է համեմատության



գնել նրա ստացած ամսական ընդհանուր աշխատավարձը սահմանված մինիմումի հետ (առանց ծախսերը հանելու)։ Մինիմումը այն սահմանն է, վորից պակաս յեկամուտը հարկման յենթակա չի։

2. Բանվորները և ծառայողները (վոչ կոլտնտեսականները), վորոնք այս, կամ այն, հիմնարկության կողմից գործուղվում են կոլտնտեսություն՝ աշխատելու համար, հարկվում են կոլտնտեսություններում։ Այդ դեպքում հաշվի չի առնվում, հարկման համար, թե կոլտնտեսության կողմից տրվող աշխատավարձը և թե այն գումարը, վորը տրվում է նրանց, գործուղող հիմնարկի կողմից։

3. Կոլտնտեսությունից դուրս, վորևէ հիմնարկությունում, կամ ձեռնարկությունում վարձու աշխատանք կատարող, կոլտնտեսականի աշխատավարձը, յենթարկվում է յեկամտային հարկման, ընդհանուր հիմունքներով, սակայն, այդ դեպքում, հարկման աշխատավարձից պետք է դուրս հանել կոլտնտեսության օգտին տրվող մասհանումը։ Օրինակ՝ կոլտնտեսականը ծառայում է կոլտնտեսությունից դուրս վորևէ հիմնարկությունում, ստանալով այդ հիմնարկությունից աշխատավարձ 160 ռ., վորից նա մաս է հանում կոլտնտեսության օգտին—5 տոկոս (8 ռ.)՝ յեկամտային հարկը պետք է հաշվել, յելնելով 152 ռուբլուց (160 ռ.–8 ռ.)։

4. Այն բանվորները և ծառայողները, վորոնք ըստ իրենց աշխատանքի բնույթի, շարունակ շրջագայության մեջ են, ինչպիսին են յերկաթուղային ծառայողները, փոստական աշխատակիցները և նմանները,—հարկվում են այն հիմնարկության, կամ ձեռնարկության կողմից, վորը կազմում է նրանց աշխատավարձի ցուցակը։

5. Յերբ աշխատակիցը միևնույն հիմնարկության մեջ, բացի աշխատավարձից ստանում է նաև գրական հոնորար, նման դեպքում հարկվող աշխատավարձին պետք է ավելացնել հոնորարը։ Նույն կարգը պետք է կիրառել այն դեպքերում, յերբ աշխատակիցը ստանում է միևնույն հիմնարկում բացի աշխատավարձից նաև կոմիսիոն, կամ տոկոսային վարձատրություն։

6. Այն ուսանողները, վորոնք գործուղվում են, փորձնական աշխատանքների համար (պրակտիկանտներ) զանազան հիմնարկություններ և ձեռնարկություններ, յենթարկվում են յեկամտային հարկման՝ բանվորների և ծառայողների համար սահմանված կարգով, յեթե հիմնարկությունը վճարում է նրանց սահմանված չհարկվող մինիմումից ավելի աշխատավարձ։

Ուսանողների թոշակը այդ աշխատավարձին չպետք է ավելացնել, վորովհետեվ թոշակից հարկ չի գանձվում:

## ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխատավարձից յեկամտային հարկ վճարելուց ազատվում են՝

ա) բոլոր այն անձինք, վորոնց ամսական վարձատրությունը չի գերազանցում սահմանված մինիմումից:

բ) Այն անձինք, վորոնց աշխատավարձը փաստորեն հարկված է գյուղմիահարկով, անկախ աշխատավարձի գումարից:

Ծանոթություն.—Յեթե այդ անձերի աշխատավարձը գյուղատնտեսության հարկման ժամանակ չի հարկված, այլ միմիայն հաշվի յե առնված, այդ դեպքում նրանք չեն ազատվում յեկամտային հարկից: Որինակ, գյուղատնտեսություն ունեցող ուսուցչի նկատմամբ՝ թեպետ նրա աշխատավարձը հաշվի յե առնված գյուղհարկում, բայց նա չի ազատվում յեկամտային հարկից, վորովհետեվ նրա աշխատավարձը վոչ մի մասով չի յենթարկված գյուղ հարկի:

գ) Զինվորական ծառայողները և պահեստի կազմը* ըստ այն աշխատավարձի, վորը ստանում են նրանք Բանվորա-Գյուղացիական Կարմիր բանակից:

Բ. Գ. Կարմիր Բանակի ռեզերվի կազմին պատկանող անձերը ազատվում են հարկից նաև ըստ այն աշխատավարձի, վորը ստանում են նրանք քաղաքացիական հիմնարկություններից և ձեռնարկություններից, վորտեղ այդ անձերը գործուղված են աշխատելու համար:

դ) Բանվորա-Գյուղացիական միլիցիայի և կալանատների շարքային և վարչական կազմը, քրեական հետախուզման ակտիվ կազմը, ռազմականացված պահակի և հրդեհաշեջ պահակի կազմին պատկանող անձերը, Պետքաղվարչության հաստիքավոր աշխատակիցները:

ե) այն անձինք, վորոնք պարգևատրված են ԽՍՀՄ. մեկ կամ մի քանի շքանշաններով, կամ պատվավոր հեղափոխական զենքով, աշխատանքի հերոսները, «Ժողովրդական դերասան» կոչման ար-

*) «Պահեստի կազմ»-ը վերաբերվում է այն անձերին, վորոնք զորացրված են և գտնվում են յերկարատեվ արձակուրդում. այդ տերմինը չպետք է շփոթել «ռեզերվի կազմի» հետ, վորին պատկանող անձերը գործուղված են քաղաքացիական հիմնարկները, զինվորական գծով աշխատելու համար:



ժանված անձինք, յեթե նրանց ամսական աշխատավարձը չի գերազանցում 500 ռուբլուց: Այդ նորմայից ավել աշխատավարձ ստանալու դեպքում, թված անձինք յենթարկվում են հարկման, միայն 500 ռուբլուց ավելի գումարի համար.

զ) պետությունից ստացած թոշակը և նպաստը հարկման յենթակա չի:

## ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յեթե բանվորը կամ ծառայողը իր խնամքի տակ ունի յերեք և ավելի հոգի, նրա հարկից կատարվում է զեղչ հետևյալ չափով՝

ա) խնամքի տակ 3 հոգի ունեցողի հարկից զեղչվում է 20 տոկոս, 4 հոգի ունեցողի 30 տոկոս, 5 հոգի ունեցողի 40 տոկոս և 6 հոգի ու ավելի ունեցողի 50 տոկոս: Յերեք հոգուց պակաս ունեցողի հարկից, զեղչ չի արվում:

բ) Այս արտոնությամբ չեն ոգտվում այն քաղաքացիները, վորոնց միամսյա վարձատրությունը տվյալ հիմնարկությունում, գերազանցում է 350 ռ. (անկախ նրա խնամքի տակ գտնվող անձերի թվից):

**ՈՐԻՆԱԿ** 1-ին.—բանվորի մեկ ամսվա ընդհանուր յեկամուտը (աշխատավարձը) հավասար է 175 ռ.:

Յեթե նա իր խնամքի տակ ունի 2 հոգուց վոչ ավելի (կամ բոլորովին չունի),—յեկամտահարկ է վճարում տվյալ ամսվա համար լրիվ չափով, առանց զեղչի (2 ռ. 26 կ.): Յեթե նա խնամքի տակ ունի 3 հոգի—վճարում է 1 ռ. 81 կ.) (20 տոկոս զեղչով), 4 հոգի ունենալու դեպքում 1 ռ. 58 կ. (30 տոկոս զեղչ) և այլն.

**ՈՐԻՆԱԿ** 2-րդ.—ծառայողը ստանում է աշխատավարձ 360 ռ.՝ նա վճարում է յեկամտահարկ 8 ռ. 94 կ. վորովհետև նրա աշխատավարձը գերազանցում է 350 ռուբլուց, նրան զեղչ չի արվում և հարկը գանձվում է լրիվ չափով:

## 3. ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Հարկատուների լրիվ ընդգրկումը և նրանց ճիշտ հաշվառումը ունի կարևոր նշանակություն. հիմնարկությունը (ձեռնարկությունը) կազմում է յուրաքանչյուր ամսվա վերջին, հատուկ ցուցակ հավելված № 1), վորտեղ գրանցում է տվյալ ամսում մինիմումից վեր վարձատրություն ստացող բոլոր քաղաքացիներին:

Վորպեսզի հնարավոր լինի պարզել, թե ովքեր են ստացել մի-

նիմումը գերազանցող վարձատրություն,—անհրաժեշտ է պարզել ռոճիկացուցակների տվյալներով յուրաքանչյուր բանվորի, կամ ծառայողի, տվյալ ամսվա հասանելիք բոլոր տեսակի վարձատրությունների ընդհանուր գումարը (չը հաշված այն վարձատրությունները, վորպիսիները ցույց են տրված այս գրքույկի 5-րդ բաժնի 2-րդ մասում):

## 4. ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Վորպեսզի հնարավոր լինի պարզել, թե ովքեր են ոգտվում արտոնությամբ (զեղչով) տարվա սկզբում (մինչև հունվար ամսվա 10-ը) հիմնարկությունները և ձեռնարկությունները պահանջում են հարկման յենթակա քաղաքացիներից տեղեկանք՝ նրանց խնամքի տակ գտնվող անձանց մասին (քաղաքներում տնատերերի, կամ լիազորների տեղեկանքը—վավերացված միլիցիայի կողմից, իսկ գյուղական վայրերում—գյուղխորհուրդների վկայականը):

Տարվա ընթացքում այդպիսի տեղեկություններ պահանջվում են միայն այն դեպքերում, յերբ խնամող անձանց կազմի մեջ տեղի յեն ունենում փոփոխություններ:

Ձևական պատճառներով բանվորներին և ծառայողներին որենքով նախատեսված արտոնությունից չզրկելու նպատակով, յեթե բանվորը կամ ծառայողը ժամանակին չի ներկայացնի տեղեկանք,—զեղչը կարելի յե կիրառել հաշվեգրքույկի մեջ յեղած տվյալների հիման վրա:

Որենքով սահմանված այդ արտոնության ճիշտ կիրառելու համար, պետք է նկատի ունենալ այն, վոր արտոնությունը կարող են վայելել միմիայն նրանք, վորոնք փաստորեն ապահովում են իրենց խնամքի տակ գտնվող անձերի գոյությունը, անկախ բարեկամական կապերից:

Խնամվողների շարքին պատկանում են այն անձինք, վորոնք չունեն իրենց գոյությունը պաշտպանելու համար ինքնուրույն յեկամուտներ, անկախ հասակից և բնակատեղից:

Աշխատանքի բորսայից, կամ սոցապահովագրման կարգով, նպաստ ստացողները, վորպես խնամվող անձինք չեն համարվում:

## 5. ՅԵԿԱՄՈՒՏԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Հարկման յեկամուտը կազմվում է հետևյալ տեսակի վարձատրություններից՝

ա) բանվորի և ծառայողի ստացած բոլոր տեսակի աշխատավարձից,



բ) խրախուսիչ վարձատրության գումարներից, տանտյեմներից և այլ վարձատրություններից:

### ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

Խրախուսիչ վարձատրություն, տանտյեմա, արտաժամյա վարձատրություն, պրեմիա բեռնավորման վարձատրությունը և անձնական հավելումը, ավելացվում են այն ամսվա աշխատավարձին, յերբ այդ վարձատրությունները վճարվում են փաստորեն:

ՈՐԻՆԱԿ՝ ծառայողը հուլիս ամսում կատարել է արտաժամյա աշխատանք, վորի համար նա ստացել է 30 ռ. վարձատրություն: Բացի դրանից նա ստացել է նույն հուլիս ամսվա համար, իր հասանելիք հիմնական աշխատավարձը, 80 ռ.՝ այդ հիմնական աշխատավարձին պետք է ավելացնել 30 ռ. և հարկադրումը կատարել յելնելով 110 ռ. յեկամտից (80 ռ. + 30 ռ.):

Յեթե այդ վճարումները տրվում են մի քանի ամիսների համար—միանվագ, այդ դեպքում անցած ամիսների հարկը վերահաշվվում է, այդ ամիսների վրա ընկնող յեկամտի գումարների համեմատ:

Մի քանի ամիսների ընթացքում հատավարձով աշխատանք կատարելու համար տրվող միանվագ վարձատրությունը, նույնպես բաժանվում է այն ամիսների վրա, վորոնց ընթացքում աշխատանքը ավարտված է և դրա համեմատ վերահաշվվում է հարկը, յելնելով ամեն մի ամսվա վրա ընկնող գումարներից:

ՈՐԻՆԱԿ՝ ծառայողին հանձնարարված է կատարել իր պարտականություններից դուրս վորևէ աշխատանք (յենթադրենք նախագիծ կազմելը): Այդ աշխատանքը ծառայողը սկսել է դիցուք, մայիսի մեկից և ավարտել է հուլիսի 15-ին ($2^1/_2$ ամսվա ընթացքում): Հուլիս ամսվա յերկրորդ մասի աշխատավարձը դուրս գրելու ժամանակ, հիմնարկությունը վճարել է ծառայողին, միանվագ 300 ռ. և բացի դրանից նույն ծառայողը ստացել է մայիս, հունիս և հուլիս ամիսներում հիմնական աշխատավարձ, դիցուկ, 175 ռ. ամսական՝ մայիս ամսվա յեկամտահարկը հաշվելիս, այդ ամսվա աշխատավարձին պետք է ավելացնել $^2/_5$-դական մասը—300 ռուբլուց (300 ռ.: 5×2=120 ռ.), հունիսի աշխատավարձին նույնպես $^2/_5$-դական մասը (120 ռ.), հուլիսի աշխատավարձին $^1/_5$-դական մասը—300 ռուբլուց (300 ռ.: 5=60 ռ.) և այդպիսով հարկը հաշվել՝ մայիս և հունիս ամիսներին, յելնելով 295 ռուբլուց յուրաքանչյուր ամսվա համար (175 ռ. + 120 ռ.)

խակ հուլիս ամսվանը, յելնելով 235 ռուբլուց (175 ռ. + 60 ռ.):

Հարկման յեկամուտի մեջ հաշվի չեն առնվում հետևյալ տեսակի գումարները.—

ա) սոցապահովագրման նպաստները.

բ) հիվանդության բժշկելու համար, բանվորներին և ծառայողներին տրվող նպաստները.

գ) չօգտագործած արձակուրդի համար տրվող կոմպենսացիան.

դ) Աշխատանքի Օրենսդրությամբ նախատեսված գործուղման և փոխադրումների համար տրվող գումարները (նույն թվում աշխատավարձի վրա կատարվող տոկոսային հավելումները, վորոնք տրվում են հանրայնացված սեկտորի բանվորներին և ծառայողներին, գործուղման ծախսերի փոխարեն):

յե) յերկաթուղային (տրամվայի) տոմսերի արժեքը, վորը տրվում է բանվորներին և ծառայողներին մեկ տեղից մյուս տեղը գործով մեկնելու համար: Տրանսպորտիկներին և նրանց ընտանիքներին տրվող ձրի տոմսերի արժեքը.

զ) այն կոմպենսացիան, վորը տրվում է սեփական գործիքները և արտահագուստը աշխատանքի ընթացքում օգտագործելու համար.

թ) Լուծարքային այն նպաստը, վորը տրվում է աշխատանքի պայմանագրի բեկման ժամանակ, Աշխատանքի Օրենսդրության հիման վրա:

ժ) Այն գումարները, վորոնք տրվում են բանվորներին և ծառայողներին, պետական հիմնարկությունների և ձեռնարկությունների կողմից, բնակարաններ վարձելու, կամ կոմունալ սպասարկումների ծախսերի համար.

ի) բնամթերային մատակարարումը (ինչպիսին են ձրի բնակարան, վառելիք, լուսավորություն, կոմունալ սպասարկում և այլն):

լ) Այն վարձատրությունը, վորը տրվում է օդաչուներին, ինքնաթիռները փորձելու համար (поаппаратное вознаграждение):

խ) գիտության և տեխնիկայի ասպարեզում գյուտարարության (за открытия) և նվաճումների համար տրվող միանվագ պրեմիաների գումարները:

ծ) Գյուտարարության և կատարելագործման համար ստացված վարձատրությունից, յեկամտահարկ հաշվելու ժամանակ, մինչև 6000 ռ. տարեկան վարձատրությունը չի հարկվում բոլորովին և հարկը գանձվում է միայն 6000 ռուբլուց գերազանցող գումարից:



կ) Այն գումարները, վորոնք տրվում են բանվորներին և ծառայողներին պետական և կոոպերատիվ հիմնարկությունների և ձեռնարկությունների կողմից, աշխատանքի լավացման և կատարելագործման առաջարկների համար, ինչպես և նյութերը տնտեսելու համար:

## ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Ուսման համար տրվող նպաստը (ստիպենդիան) չի կարելի համարել վորպես ինքնուրույն յեկամուտ, հետևապես այդ նպաստը հարկման յեկամուտի մեջ հաշվի չի առնվում:

2. Այն ծախսերը, վորոնք կապված են ալիմենտներ վճարելու հետ, հարկման յեկամտից չեն հանվում: Այդ պատճառով այն անձինք, վորոնք ստանում են ալիմենտներ,—դասվում են ալիմենտ վճարողի խնամվող անձերի շարքին, հարկից զեղջ կատարելու նպատակով:

## ԻՆՉՆ Է ՀԱՆՎՈՒՄ ՀԱՐԿՎՈՂ ՅԵԿԱՄՈՒՏԻՑ

Հարկվող յեկամտից հանվում են վորպես ծախք հասարակական կազմակերպությունների ոգտին տրվող վճարները (նույն թվում պրոֆմիութենական և կուսակցական վճարները), յեթե միայն այդ վճարումների գումարը գերազանցում է տվյալ ամսվա ընդհանուր յեկամտի 10 տոկոսից:

## 6. ՀԱՐԿԻ ՀԱՇՎԵԼԸ

Հարկը հաշվվում է տվյալ ամսվա ստացած փաստացի յեկամտի գումարի համեմատ, (տես այս գրքույկի 5-րդ բաժնի 1-ին մասը) այն չափերով, վորոնք նշված են այս գրքույկին կցված ոժանդակ աղյուսակում (հավելված № 2 ա.): Յեթե ամսական յեկամուտի գումարը 600 ռուբլուց ավելի յե,—հարկը պետք է հաշվել № 1 դրույքատախտակով (հավելված № 2):

Նախքան հարկի հաշվելը, ընդհանուր յեկամտից պետք է հանել գրքույկի 5-րդ բաժնի 3-րդ մասում նշված ծախսերը, յեթե միայն այդպիսիներն գերազանցել են ընդհանուր յեկամտի 10 տոկոսից:

ՕՐԻՆԱԿ՝ ծառայողը ստանում է 150 ռուբլի. նա տվյալ ամ-

սում պրոֆմիյու թեննական, կուսակցական և այլ կազմակերպությունների կատարել և մասհանումներ 20 ռուբլի։ Այդ դեպքում 20 ռ. հանվում է վորպես ծախս, իսկ 130 ռ. յեկամուտը յենթարկվում է հարկման։

Յեթե նույն ծառայողի կատարած վճարները կազմի 10 ռուբլի, այդ դեպքում 10 ռուբլին վորպես ծախս չպետք է համարել (վորովհետև չի գերազանցում 150 ռ. 10 տոկոսից) և հարկումը պետք է կատարել յելնելով 150 ռ. յեկամուտից։

Յեթե յեկամուտի գումարը լրիվ ռուբլիներով չի, հարկը հաշվելու ժամանակ յեկամուտը պետք է կլորացնել մինչև 1 ռուբլի, հետևյալ կարգով՝ մինչև 50 կոպ. հաշվի չպետք է առնել, իսկ 50 կոպ. և ավելին պետք է հաշվել վորպես մեկ ամբողջ ռուբլի։

## 7. ՀԱՐԿԸ ՊԱՀԵԼՈՒ ՅԵՎ ՄՈՒԾԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՅԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

1. Հարկը պահվում է ամբողջ ամսվա յերկրորդ մասի աշխատավարձը վճարելու ժամանակ։

Այն դեպքում, յերբ աշխատավարձը տրվում է մի քանի ռոճկացուցակներով և հնարավոր չի ամսի վերջին տալ ամբողջ ամսվա հասանելիք վարձատրության չափը,—թույլատրվում է հարկը պահել հետևյալ ամսվա առաջին մասի աշխատավարձը տալու ժամանակ։

Սակայն այդպիսի ամեն մի առանձին դեպքում հիմնարկները և ձեռնարկությունները պետք է ստանան ֆինբաժնից հատուկ թույլտվություն։

2. Հարկը պահելու մասին պետք է անել համապատասխան նշանակումներ ռոճկացուցակում (հատուկ սյունյակում)։

3. Բանվորներից և ծառայողներից հարկը սխալ գանձելու դեպքում, սխալ գանձված գումարը վերադարձվում է, կամ հարկատուի ցանկությամբ,—հաշվի յե առնվում ի դիմաց նրա հետագա վճարումների, հիմնարկության (ձեռնարկության) անմիջական կարգադրությամբ, յեթե միայն սխալը տեղի յե ունեցել ընթացիկ տարում։ Դրա մասին յերեք որվա ընթացքում պետք է հայտնել տեղական ֆինբաժնին։

Յեթե սխալը կատարվել է անցյալ տարիներում, այդ դեպ-



քում սխալ գանձված գումարը կարելի յե վերադարձնել միմիայն ֆինբաժնի կարգադրությամբ։

4. Բանվորներից և ծառայողներից պահված հարկի գումարները, աշխատավարձը վճարելու պահից յերեք որվա ընթացքում, մուծվում են կամ փոխադրվում են փոստով, հարկերը ընդունող մոտակա դրամարկղները (պետբանկի դրամարկղները)։

Այն տեղերում, վորտեղ չկան դրամարկղներ և փոստի հիմնարկներ, հարկը մուծվում է մոտակա դրամարկղը—հինգ որվա ընթացքում։

Այն դեպքերում, յերբ տվյալ հիմնարկության, կամ ձեռնարկության աշխատակիցներից պահած ամսական հարկի ընդհանուր գումարը չի գերազանցում մեկ ռուբլուց,—թույլատրվում է մուծումները կատարել յեռամսյակներով։

ՈՐԻՆԱԿ՝ Հունվար—մարտ ամիսների հարկը կարելի յե մուծել վոչ ուշ ապրիլի 3-ին և այլն։

## 8. ԲԱՑ ԹՈՂՆՎԱԾ (ՎՐԻՊՎԱԾ) ԱՆՁԵՐԻ ՀԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Յեթե պարզվի, վոր այս, կամ այն անձնավորությունը վրիպել է հարկումից, կամ հարկը հաշված է յեղել պակաս, այդ դեպքում հիմնարկությունը (ձեռնարկությունը) պարտավոր է վերահաշվել հարկը։ Հարկի տարբերությունը պետք է մուծել հետևյալ ամսվա հարկի հետ միասին։ Յեթե հարկի տարբերությունը գերազանցի տրվող աշխատավարձի 20 տոկոսից, այդ դեպքում տարբերությունը պետք է պահել հետևյալ ամիսներում։

2. Այն դեպքում, յերբ հարկատուն փոխադրվել է մի ուրիշ հիմնարկություն, կամ աշխատանքի ուրիշ վայր, նրա վրա մնացած հարկի մնացորդի գանձման համար, պետք է հայտնել աշխատանքի նոր տեղը, իսկ յեթե հարկատուն աշխատանքից հեռացված է, նրա վրա մնացած հարկի մնացորդի գանձման համար, պետք է հայտնել ֆինբաժնին—ըստ հարկատուի բնակավայրի։

3. Ընթացիկ տարում հարկումից վրիպած անձերի հարկը հաշվվում է ամսական դրույքներով (№ 1 ցանկ և ոժանդակ տախտակ), իսկ յեթե վրիպումը տեղի յե ունեցել անցյալ տարիներում, այդ դեպքում հարկը պետք է հաշվել տարեկան դրույքներով, № 1 ա. ցանկով (հավելված № 3)։ Սխալներից խուսափելու

նպատակով, ամեն մի այդպիսի դեպքում, պետք է դիմել տեղի ֆինբաժնին, ցուցմունքներ ստանալու համար:

## 9. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Հիմնարկությունները և ձեռնարկությունները ներկայացնում են ֆինբաժնին, տարեկան մեկ անգամ, հաշվետվություն (№ 4 ձևով, վորը կցվում է) վոչ ուշ հունիսի ամսվա 15-ից: Հաշվետվությունը կազմվում է միայն մայիս ամսվա աշխատավարձի հարկման մասին:

Այն հիմնարկությունները և ձեռնարկությունները, վորոնք չունեն մինիմումից վեր աշխատավարձ ստացող բանվորներ և ծառայողներ, հաշվետվության փոխարեն ներկայացնում են նշված ժամկետին, տեղեկանք, հասարակ ձևով, վորտեղ պետք է մատնանշել աշխատակիցների ընդհանուր թիվը և աշխատավարձի գումարը:

## 10. ԻՆՉՊԻՍԻ՞ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԿՐՈՒՄ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԽԱԽՏԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

1. Բանվորներից և ծառայողներից հարկը չպահելու, կամ ժամանակին չմուծելու համար, կոոպերատիվ ձեռնարկությունների և հասարակական կազմակերպությունների ղեկավարները յենթարկվում են տուգանքի մինչև 75 ռուբլի, իսկ մասնավոր վարձողները—մինչև 150 ռուբլի և բացի այդ նշված անձերը պարտավոր են մուծել հասանելիք հարկի գումարը, սահմանված տուժով:

Խախտումների համար պետական հիմնարկությունների և ձեռնարկությունների ղեկավարները յենթարկվում են պատասխանատվության վարչական կարգով, իսկ հարկ յեղած դեպքում—քրեական կարգով:

Նման պատասխանատվության յենթարկվում են հիմնարկությունների և ձեռնարկությունների ղեկավարները, հավասարապես մասնավոր վարձողները, նաև ձեվ № 4 հաշվետվությունը սխալ կազմելու, կամ ժամանակին չներկայացնելու դեպքում:



## 11. ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՀԱՐԿՄԱՆ ԴԵՄ ԲՈՂՈՔ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Այն բանվորները և ծառայողները, վորոնք գտնում են, վոր նրանց աշխատավարձի հարկը հաշված է սխալ,—կարող են ներկայացնել բողոք ֆինբաժնին մեկ ամսվա ընթացքում, հաշված հարկը պահելու որից:

2. Բողոքը հարգելու դեպքում ֆինբաժնի կարգադրությամբ մտցվում են հարկման մեջ համապատասխան ուղղումներ, իսկ յեթե ֆինբաժնի կարծիքով բողոքը բավարարման յենթակա չի, (թեկուզ մասամբ), այդ դեպքում հարցը հանձնվում է հարկային հանձնաժողովի քննության:

3. Բողոք տալը չի դադարեցնում հարկի գանձումը:

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԽՍՀ—ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
15708-57

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Համաձայն Համամիութենական Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1931 թ. օգոստոսի 1-ի վորոշման, 500 ռուբ. մեծ աշխատավարձ ստացող ճարտարա-տեխնիքական կազմին պատկանող անձինք վճարում են յեկամտային հարկ 3.5 %-ի չափով, հաշված աշխատավարձից:

Մինչեվ 500 ռուբ. ներառյալ աշխատավարձ ստացող նույն կազմին պատկանող անձինք վճարում են յեկամտահարկ այն չափերով, վորոնք սահմանված են մյուս բանվորների և ծառայողների համար (տես № 1 ցանկը կամ ոժանդակ տախտակը):

Օրինակ՝ 1) ճարտարագետը ստանում է աշխատավարձ ամսական 700 ռուբ.՝ նրանից պետք է գանձել յեկամտահարկ 3,5 % այդ գումարից, այսինքն **24** ռուբ. **50** կոպ. (700 ռ.: 100. 3,5) 2) ճարտարագետը ստանում է աշխատավարձ 500 ռ.՝ նրանից պետք է գանձել յեկամտահարկ համաձայն ոժանդակ տախտակի **17** ռ. **22** կոպ.

2. Բ.Գ. Կարմիր բանակի և Նավատորմիղի պահեստի կազմին պատկանող և յերկարատեվ արձակուրդում գտնվող հրամանատարական կազմին պատկանող անձինք ազատվում են աշխատավարձից պահանջվող յեկամտահարկից միմիայն այն ժամանակամիջոցի համար վորի ընթացքում նրանք կանչված են զորամասեր աշխատավորների ռազմապատրաստման կամ իրենց վերապատրաստման նպատակով: Իսկ մյուս ժամանակամիջոցի համար նրանք յենթարկվում են յեկամտահարկի ընդհանուր հիմունքներով:

3. Յերկրային զորամասերի փոփոխական կազմին պատկանող անձինք, քաղաքացիական հիմնարկություններում գտնվելու ժամանակամիջոցում, յեկամտահարկից չեն ազատվում:

4. Կարմիր պարտիզանների նկատմամբ յեկամտահարկի արտոնություններ չեն նախատեսնված:

(Հավելված № 1)

# ՀԱՐԿՄԱՆ ՑՈՒՑԱԿ

........................ամսվա աշխատավարձի հարկման մասին

| [illegible] | Հարկման ենթակա անձերի ազգանուն, անուն և հայրանուն | [illegible] | Աշխատավարձի տեսակները | | | | | | | [illegible] | [illegible] | [illegible] | | [illegible] | | [illegible] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | [illegible] | [illegible] | | | | | Ընդամենը | | | Ռ. | Կ. | Ռ. | Կ. | |
| | " | | | | | | | | | | | | | | | |



(Հավելված № 2)

## ԴՐՈՒՅՔԱՑԱՆՑԱԿ № 1.

Ցեկամտահարկի ամսական կոպարների

| Ամբոխով | Ամսական հարկման եկամուտը | | | Հ ա ր կ ա չ ա փ ը | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | | Մինչև | 85 ". | | | 0,75% | եկամտային գումարից | | |
| 2 | 85 ". | վեր մինչև | 100 ". | 64 կ. | + | 1,25% | 85 ". | գերազանցող գումարից. | |
| 3 | 100 ". | » | 150 ". | 83 կ. | + | 1,6 % | 100 ". | » | » |
| 4 | 150 ". | » | 200 ". | 1 ". 63 կ. | + | 2,5 % | 150 ". | » | » |
| 5 | 200 ". | » | 250 ". | 2 ". 88 կ. | + | 3,5 % | 200 ". | » | » |
| 6 | 250 ". | » | 330 ". | 4 ". 63 կ. | + | 3,7 % | 250 ". | » | » |
| 7 | 330 ". | » | 410 ". | 7 ". 59 կ. | + | 4,5 % | 330 ". | » | » |
| 8 | 410 ". | » | 500 ". | 11 ". 19 կ. | + | 6,7 % | 410 ". | » | » |
| 9 | 500 ". | » | 585 ". | 17 ". 22 կ. | + | 10,8 % | 500 ". | » | » |
| 10 | 585 ". | » | 670 ". | 26 ". 40 կ. | + | 14,5 % | 585 ". | » | » |
| 11 | 670 ". | » | 830 ". | 38 ". 73 կ. | + | 19,5 % | 670 ". | » | » |
| 12 | 830 ". | » | 1000 ". | 69 ". 93 կ. | + | 24 % | 830 ". | » | » |
| 13 | 1000 ". | » | 1170 ". | 110 ". 73 կ. | + | 28 % | 1000 ". | » | » |
| 14 | 1170 ". | » | 1330 ". | 158 ". 33 կ. | + | 31 % | 1170 ". | » | » |
| 15 | 1330 ". | » | 1660 ". | 207 ". 93 կ. | + | 34 % | 1330 ". | » | » |
| 16 | 1660 ". | » | 2000 ". | 320 ". 13 կ. | + | 36 % | 1660 ". | » | » |
| 17 | 2000 ". | » | — | 442 ". 53 կ. | + | 37,5 % | 2000 ". | » | » |

## Եկամուտները՝ սկսած—մինչև

**154 ռ.—167 ռ.**

| Ամսական վաստակը | Ամբողջ չափը | Հարկի գումարը, զեղչից հետո: 20% զեղչով | 30% զեղչով | 40% զեղչով | 50% զեղչով |
|---|---|---|---|---|---|
| ռ. | ռ. կ. | ռ. կ. | ռ. կ. | ռ. կ. | ռ. կ. |
| 154 | 1,73 | 1,38 | 1,21 | 1,04 | 0,87 |
| 155 | 1,76 | 1,41 | 1,23 | 1,06 | 0,88 |
| 156 | 1,78 | 1,42 | 1,25 | 1,07 | 0,89 |
| 157 | 1,81 | 1,45 | 1,27 | 1,09 | 0,91 |
| 158 | 1,83 | 1,46 | 1,28 | 1,10 | 0,92 |
| 159 | 1,86 | 1,49 | 1,30 | 1,12 | 0,93 |
| 160 | 1,88 | 1,50 | 1,32 | 1,13 | 0,94 |
| 161 | 1,91 | 1,53 | 1,34 | 1,15 | 0,96 |
| 162 | 1,93 | 1,54 | 1,35 | 1,16 | 0,97 |
| 163 | 1,96 | 1,57 | 1,37 | 1,18 | 0,98 |
| 164 | 1,98 | 1,58 | 1,39 | 1,19 | 0,99 |
| 165 | 2,01 | 1,61 | 1,41 | 1,21 | 1,01 |
| 166 | 2,03 | 1,62 | 1,42 | 1,22 | 1,02 |
| 167 | 2,06 | 1,65 | 1,44 | 1,24 | 1,03 |

**247 ռ.—259 ռ.**

| Ամսական վաստակը | Ամբողջ չափը | Հարկի գումարը, զեղչից հետո: 20% զեղչով | 30% զեղչով | 40% զեղչով | 50% զեղչով |
|---|---|---|---|---|---|
| ռ. | ռ. կ. | ռ. կ. | ռ. կ. | ռ. կ. | ռ. կ. |
| 247 | 4,53 | 3,62 | 3,17 | 2,72 | 2,27 |
| 248 | 4,56 | 3,65 | 3,19 | 2,74 | 2,28 |
| 249 | 4,60 | 3,68 | 3,22 | 2,76 | 2,30 |
| 250 | 4,63 | 3,70 | 3,24 | 2,78 | 2,32 |
| 251 | 4,67 | 3,74 | 3,27 | 2,80 | 2,34 |
| 252 | 4,70 | 3,76 | 3,29 | 2,82 | 2,35 |
| 253 | 4,74 | 3,79 | 3,32 | 2,84 | 2,37 |
| 254 | 4,78 | 3,82 | 3,35 | 2,87 | 2,39 |
| 255 | 4,82 | 3,86 | 3,37 | 2,89 | 2,41 |
| 256 | 4,86 | 3,88 | 3,40 | 2,91 | 2,43 |
| 257 | 4,89 | 3,91 | 3,42 | 2,93 | 2,45 |
| 258 | 4,93 | 3,94 | 3,45 | 2,96 | 2,47 |
| 259 | 4,96 | 3,97 | 3,47 | 2,98 | 2,48 |

**339 ռ.—350 ռ.**

| Ամսական վաստակը | Ամբողջ չափը | Հարկի գումարը, զեղչից հետո: 20% զեղչով | 30% զեղչով | 40% զեղչով | 50% զեղչով |
|---|---|---|---|---|---|
| ռ. | ռ. կ. | ռ. կ. | ռ. կ. | ռ. կ. | ռ. կ. |
| 339 | 8,00 | 6,40 | 5,60 | 4,80 | 4,00 |
| 340 | 8,04 | 6,43 | 5,63 | 4,82 | 4,02 |
| 341 | 8,09 | 6,47 | 5,66 | 4,85 | 4,05 |
| 342 | 8,13 | 6,50 | 5,69 | 4,88 | 4,07 |
| 343 | 8,18 | 6,54 | 5,73 | 4,91 | 4,09 |
| 344 | 8,22 | 6,58 | 5,75 | 4,93 | 4,11 |
| 345 | 8,27 | 6,62 | 5,79 | 4,96 | 4,14 |
| 346 | 8,31 | 6,65 | 5,82 | 4,99 | 4,16 |
| 347 | 8,36 | 6,69 | 5,85 | 5,02 | 4,18 |
| 348 | 8,40 | 6,72 | 5,88 | 5,04 | 4,20 |
| 349 | 8,46 | 6,76 | 5,92 | 5,07 | 4,23 |
| 350 | 8,49 | 6,79 | 5,94 | 5,09 | 4,25 |

**430—443 ռ.**

| Ամսական վաստակը | Ամսական հարկը |
|---|---|
| ռ. | ռ. կ. |
| 430 | 12,53 |
| 431 | 12,60 |
| 432 | 12,66 |
| 433 | 12,73 |
| 434 | 12,80 |
| 435 | 12,87 |
| 436 | 12,93 |
| 437 | 13,00 |
| 438 | 13,07 |
| 439 | 13,13 |
| 440 | 13,20 |
| 441 | 13,27 |
| 442 | 13,33 |
| 443 | 13,40 |



## Եկամուտները՝ սկսած—մինչև

| 444 ռ.—463 ռ. Ամսական վաստակը | Ամսական հարկը | 464 ռ.—483 ռ. Ամսական վաստակը | Ամսական հարկը | 484 ռ.—503 ռ. Ամսական վաստակը | Ամսական հարկը | 504 ռ.—523 ռ. Ամսական վաստակը | Ամսական հարկը | 524 ռ.—543 ռ. Ամսական վաստակը | Ամսական հարկը | 544 ռ.—563 ռ. Ամսական վաստակը | Ամսական հարկը | 564 ռ.—583 ռ. Ամսական վաստակը | Ամսական հարկը | 584 ռ.—600 ռ. Ամսական վաստակը | Ամսական հարկը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ռ. | ռ. կ. | ռ. | ռ. կ. | ռ. | ռ. կ. | ռ. | ռ. կ. | ռ. | ռ. կ. | ռ. | ռ. կ. | ռ. | ռ. կ. | ռ. | ռ. կ. |
| 444 | 13,47 | 464 | 14,81 | 484 | 16,15 | 504 | 17,65 | 524 | 19,81 | 544 | 21,97 | 564 | 24,13 | 584 | 26,29 |
| 445 | 13,54 | 465 | 14,88 | 485 | 16,22 | 505 | 17,76 | 525 | 19,92 | 545 | 22,08 | 565 | 24,24 | 585 | 26,40 |
| 446 | 13,60 | 466 | 14,94 | 486 | 16,28 | 506 | 17,87 | 526 | 20,03 | 546 | 22,19 | 566 | 24,35 | 586 | 26,55 |
| 447 | 13,67 | 467 | 15,01 | 487 | 16,35 | 507 | 17,98 | 527 | 20,14 | 547 | 22,30 | 567 | 24,46 | 587 | 26,69 |
| 448 | 13,74 | 468 | 15,08 | 488 | 16,42 | 508 | 18,08 | 528 | 20,24 | 548 | 22,41 | 568 | 24,56 | 588 | 26,84 |
| 449 | 13,80 | 469 | 15,14 | 489 | 16,48 | 509 | 18,19 | 529 | 20,35 | 549 | 22,51 | 569 | 24,67 | 589 | 26,98 |
| 450 | 13,87 | 470 | 15,21 | 490 | 16,55 | 510 | 18,30 | 530 | 20,46 | 550 | 22,62 | 570 | 24,78 | 590 | 27,13 |
| 451 | 13,94 | 471 | 15,28 | 491 | 16,62 | 511 | 18,41 | 531 | 20,57 | 551 | 22,73 | 571 | 24,89 | 591 | 27,27 |
| 452 | 14,00 | 472 | 15,34 | 492 | 16,68 | 512 | 18,52 | 532 | 20,68 | 552 | 22,84 | 572 | 25,00 | 592 | 27,42 |
| 453 | 14,07 | 473 | 15,41 | 493 | 16,75 | 513 | 18,62 | 533 | 20,78 | 553 | 22,94 | 573 | 25,10 | 593 | 27,56 |
| 454 | 14,17 | 474 | 15,48 | 494 | 16,82 | 514 | 18,73 | 534 | 20,89 | 554 | 23,05 | 574 | 25,21 | 594 | 27,71 |
| 455 | 14,21 | 475 | 15,55 | 495 | 16,89 | 515 | 18,84 | 535 | 21,00 | 555 | 23,16 | 575 | 25,32 | 595 | 27,85 |
| 456 | 14,27 | 476 | 15,61 | 496 | 16,95 | 516 | 18,95 | 536 | 21,11 | 556 | 23,27 | 576 | 25,43 | 596 | 28,00 |
| 457 | 14,34 | 477 | 15,68 | 497 | 17,02 | 517 | 19,06 | 537 | 21,22 | 557 | 23,38 | 577 | 25,54 | 597 | 28,14 |
| 458 | 14,41 | 478 | 15,75 | 498 | 17,09 | 518 | 19,16 | 538 | 21,32 | 558 | 23,48 | 578 | 25,64 | 598 | 28,29 |
| 459 | 14,47 | 479 | 15,81 | 499 | 17,15 | 519 | 19,27 | 539 | 21,43 | 559 | 23,59 | 579 | 25,75 | 599 | 28,43 |
| 460 | 14,54 | 480 | 15,88 | 500 | 17,22 | 520 | 19,38 | 540 | 21,54 | 560 | 23,70 | 580 | 25,86 | 600 | 28,58 |
| 461 | 14,61 | 481 | 15,95 | 501 | 17,33 | 521 | 19,49 | 541 | 21,65 | 561 | 23,81 | 581 | 25,97 | | |
| 462 | 14,67 | 482 | 16,01 | 502 | 17,44 | 522 | 19,60 | 542 | 21,76 | 562 | 23,92 | 582 | 26,08 | | |
| 463 | 14,74 | 483 | 16,08 | 503 | 17,55 | 523 | 19,70 | 543 | 21,86 | 563 | 24,02 | 583 | 26,18 | | |

Այս դրույքատախտակով հարկը հաշվվում է միմիայն այն դեպքերում, երբ բանվորը կամ ծառայողը վրիպել է հարկումից անցյալ տարիներում

(Հավելված № 3)

## ԴՐՈՒՅՔԱՏԱԽՏԱԿ № 1. Ա

Եկամտահարկի տարեկան կոպարների

| Կարգեր | Տարեկան հարկման եկամուտը | Հարկաչափ |
|---|---|---|
| 1 | Մինչև 1000 ռ. | 0,9 % եկամուտի գումարից |
| 2 | 1000 ռ. վեր մինչև 1200 ռ. | 9 ռ. + 1,25% 1000 գերազանցող գումարից |
| 3 | 1200 ռ. » 1800 ռ. | 11 ռ. 50 կ. + 1,75% 1200 » » |
| 4 | 1800 ռ. » 2400 ռ. | 22 ռ. + 2, 5% 1800 » » |
| 5 | 2400 ռ. » 3000 ռ. | 37 ռ. + 3, 5% 2400 » » |
| 6 | 3000 ռ. » 4000 ռ. | 58 ռ. + 3, 7% 3000 » » |
| 7 | 4000 ռ. » 5000 ռ. | 95 ռ. + 4, 5% 4000 » » |
| 8 | 5000 ռ. » 6000 ռ. | 140 ռ. + 7, 5% 5000 » » |
| 9 | 6000 ռ. » 7000 ռ. | 215 ռ. + 11% 6000 » » |
| 10 | 7000 ռ. » 8000 ռ. | 325 ռ. + 15% 7000 » » |
| 11 | 8000 ռ. » 10000 ռ. | 475 ռ. + 20% 8000 » » |
| 12 | 10000 ռ. » 12000 ռ. | 875 ռ. + 25% 10000 » » |
| 13 | 12000 ռ. » 14000 ռ. | 1375 ռ. + 29% 12000 » » |
| 14 | 14000 ռ. » 16000 ռ. | 1955 ռ. + 32% 14000 » » |
| 15 | 16000 ռ. » 20000 ռ. | 2595 ռ. + 35% 16000 » » |
| 16 | 20000 ռ. » 24000 ռ. | 3995 ռ. + 36, 5% 20000 » » |
| 17 | 24000 ռ. » | 5455 ռ. + 37, 5% 24000 » » |

Ներկայացվում է
վոչ ուշ 15/6-ի
տարեկան մեկ անգամ

................ Ֆինբաժին

## ՏԵՂԵԿԱԳԻՐ (ձև № 4)

................ բանվորների, ծառայողների 193 թ. մայիս ամսվա աշխատավարձից եկամտահարկ հաշվելու մասին

(Հիմնարկի անվանումը)

Հիմնարկի հասցեն ................

| Բանվորների, ծառայողների և նրանց հավասարեցված անձերի ընդհանուր թիվը ........ | Նրանց աշխատավարձի ընդհանուր գումարը ........ ռ. ........ կոպ. |
|---|---|

| № № ըստ կարգի | ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԸ ԸՍՏ ԽՄԲԵՐԻ | Հարկատուների թիվը | Հարկման ենթակա գումարը | Հարկի գումարը իջեցումից հետո | ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|---|---|---|
| | Բանվորներ . . . . . . . . . . | | | | |
| | Ծառայողներ . . . . . . . . . . | | | | |
| | Արհեստագործական կուպերատիվ արտելների ընդհանուր արհեստանոցներում աշխատող տնայնագործները և այլ անձերը, վորոնք հարկվում են բանվորների և ծառայողների համար սահմանված կարգով . . . . . . . . . . | | | | |
| | Ընդամենը*) | | | | |

*) Նույն թվում ազատվել են արտոնությամբ ըստ ընտանեկան դրութ. ........ հոգի, վորը ........ ռ. ........ կոպ. Գյուղմիահարկին ենթարկվելու հետևանքով, ազատված են եկամտահարկից ........ հոգի ........ ռ. եկամուտով.

1. ՀԻՄՆԱՐԿԻ ՂԵԿԱՎԱՐ ................

2. ՀԱՇՎԱՊԱՀ ................

« » ........ 193 թ. ելից № ........

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


էջ

1. Աշխատավարձի հարկման ընդհանուր սկզբունքներ ... 5
2. Արտոնություններ և բացառություններ . . . . . . . 8
3. Հարկատուների հաշվառումը . . . . . . . . . . . . 9
4. Խնամքի տակ գտնվող անձերի հաշվառումը . . . . . . 10
5. Յեկամուտի հաշվառումը . . . . . . . . . . . . 10
6. Հարկի հաշվելը . . . . . . . . . . . . . 13
7. Հարկը պահելու և մուծելու կարգը և ժամկետները . . 14
8. Բաց թողնված անձերի հարկման կարգը . . . . . . 15
9. Հաշվետվության ներկայացնելու կարգը . . . . . 16
10. Պատասխանատվություն խախտումների համար . . . 16
11. Բողոքարկման կարգը . . . . . . . . . . . . . 17
12. Լրացուցիչ պարզաբանումներ . . . . . . . . . . 18

Հավելվածներ՝

1. Հարկման ցուցակ . . . . . . . . . . . . . . 20
2. Դրույքատախտակ № 1 . . . . . . . . . . . 21
3. № 1 դրույքատախտակի օժանդակ աղյուսակը . . . 22
4. Դրույքատախտակ № 1 ա . . . . . . . . . . . 28
5. Հաշվետվության ձև . . . . . . . . . . . . 29



ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԱՍՀ — ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0208305

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

336.2
S-40